№ 7 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 18 — 1892 — ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 18 № 7

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՆԵՐԿԱՅ 1892 ԹԻԱԿԱՆԻՆ

20-ՐԴ ՏԱՐԻ „ՄՇԱԿ“ 20-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնական և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ.

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն՝ լրագիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԹԵՄԻՍ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՔՆՈՐԴԻ կարգադրութեան համաձայն սրանով յայտնում ենք Թիֆլիսի հայազգի ժողովրդին, որ թեմական մի պատգամաւորի ընտրութեան (կաթողիկոսական ընտրութեան) համար Թիֆլիսի եկեղեցիներում երեք երեսփոխանների ընտրութիւնները լինելու են՝ կուր գետի աջակողմը գտնված, այն է՝ բուն քաղաքի եկեղեցիներում, կիրակի, ՅՈՒՆՎԱՐԻ 26-ին, առաւօտեան ժամը 12-ին. իսկ ձախակողմը գտնված, այն է Կուկիայի, Հալաբարի և Նաւթլուղի եկեղեցիներում, կիրակի, ՓԵՏՐՎԱՐԻ 2-ին, նոյն ժամին: Ուստի հրաւիրում ենք Թիֆլիսի հայազգի ժողովրդին գնալ նշանակեալ ժամանակին իրանց եկեղեցիները մասնակցելու ընտրութիւններին:

Առանձին հրաւէրներ լինելու չեն: Իւրաքանչիւր տանից մի անդամը միայն իրաւունք ունի մասնակցելու ընտրութեանը, որն և հասակով 25 տարեկանից պակաս չը պէտք է լինի:

Վերատեսուչք բարեկարգութեան եկեղեցեաց հայոց Թիֆլիսի՝ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեան, Հալաբարի՝ Աշոտ քահանայ Թէմուրազեանց: 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ պատգամաւորների ընտրութեան մասին. Տասն տարվայ գոյութիւնից յետոյ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երևանում հիմնելի գինեգործական դպրոցի առիթով. Բաշինջաղեանի երկու նոր պատկերներ. Երևանի կեանքից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արևելքի գրութիւնը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

„Մշակի“ անցեալ, 6-որդ համարում, խօսելով եկեղեցական պատգամաւորների ընտրութեան մասին, մենք ասեցինք որ թեմական առաջնորդից քահանաներին տուած հրահանգի 14-որդ յօդուածը կարօտ է փոփոխութեան: Ժողովրդական ընտրութեան ժամանակ չէ կարելի, որ նախագահող քահանան իրանից որոշէ երկու անձանց, որոնք համ ընտրողական թերթիկներ կը բաժանեն, համ էլ իրանք կը գրեն անգրագէտ ընտրողների փոխարէն թեկնածուների անունները թերթիկների վրա: Պարզ է որ այդպիսով նրանք կորոշեն ում կը կամենան և գրել կը տան թերթիկների վրա այնպիսի անձանց անունները, որոնք իրանց համար ձեռնտու են: Դա, ուրեմն, չի լինի ժողովրդական ընտրութիւն, այլ լոկ քահանայական ընտրութիւն:

Սակայն նոյն հրահանգի մէջ կայ և մի այլ յօդուած, այն է յօդուած 16-որդ, որտեղ ասված է. „թերթիկները ժողովելուց յետոյ, նախագահն ընտրողների համաձայնութեամբ հրաւիրում է իրան մօտ երկու գրագէտ մարդ, որոնք նախագահի ընտրվածների հետ միասին ստուգում և ժողովում են ընտրված երեցփոխանների ձայները:“

Այն, ինչ որ պահանջում է հրահանգի 16-որդ յօդուածը, պէտք է իսկապէս կատարվի ընտրութիւնների սկզբում և ոչ թէ ընտրութիւններից յետոյ: Մենք ասեցինք մեր նախընթաց յօդուածում, որ ընտրութիւնը սկսվելուց առաջ ժողովականները, ինչպէս ամեն ընտրողական ժողովում, պէտք է անմիջապէս ընտրեն իրանց միջից երկու անձինք, որոնք և կը կատարեն այն պաշտօնը, որ հրահանգը ուզում է յանկացնել քահանայից ինքնակամ որոշած երկու անձանց: Եթէ հրահանգի 16-որդ յօդուածը թոյլ է տալիս, որ ընտրութիւններից յետոյ ժողովականները իրանց միջից ընտրեն երկու անձինք ընտրութեան հետևանքը վերաստուգելու համար, դա, ըստ ժողովրդական առածի, կը լինի „հարսանիքից յետոյ երաժշտութիւն“: Հարկաւոր է այդ անել ոչ թէ ընտրութիւններից յետոյ, այլ ընտրութիւններից առաջ: Ուրեմն պէտք է միայն 14-որդ յօդուածի մէջ մտցնել 16-որդ յօդուածի իմաստը, այսինքն լրացնել 14-որդ յօդուածը 16-որդի իմաստով: Յոյս ունենք որ այդ մեր նկատողութիւնը ուշադրութեան կառնվի և ընտրութիւնները կը կատարվեն համաձայն հրահանգի 16-որդ յօդուածի, այսինքն ընտրութիւնների սկզբում արդէն թոյլ կը տրվի ժողովականներին ընտրել իրանց միջից երկու անձինք, որոնք համ թերթիկները կը բաժանեն, համ կը գրեն թերթիկների վրա թեկնածուների անունները՝ անգրագէտների փոխարէն, համ էլ վերջապէս կը ժողովեն ընտրողների ձեռքից թերթիկներն ու կը յանձնեն նախագահին արդէն գրված թերթիկները:

Գ. Ա.

ՏԱՍՆ ՏԱՐՎԱՅ ԳՈՅՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

—

Եթէ մի լրագիր, տասն տարի գոյութիւն ունենալուց յետոյ փոխանակ իր բաժանորդների թիւն աւելացնելու, հետզհետէ կորցնում է իր բաժանորդների թիւը,—անշուշտ կասէք, որ լրագիրը չիմացաւ հետաքրքրել իր ընթերցողներին: Եթէ մի ընկերութիւն, տասն տարի գոյութիւն ունենալուց յետոյ, սկզբնական 700 անդամներից հասցրել է 100 անդամների,—անշուշտ պիտի ասէք, որ այդ հաստատութիւնը չիմացաւ իր գործունէութեամբ գրաւել հասարակութեան սէրն ու համակրանքը:

Եւ ահա այդ նոյն երևոյթը պատահել է կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան հետ: Տասն տարի գոյութիւն ունենալուց յետոյ, նա քիչ է մնում կատարելապէս մոռացվել է հասարակութիւնից: Այն ընկերութիւնը, որը ահագին գործ կարող էր կատարել, ցօնում է այժմ իր գոյութեան տասն տարվայ տարեդարձը,—սակայն ի՞նչով... Նրանով որ, ինչպէս մի անընդունակ մանրավաճառ, որը շնորհ չունենալով ընդարձակել իր առևտուրը, տասն տարվայ ապարդիւն գործունէութիւնից յետոյ, սկսում է խնայել կօպէկները՝ կարելով իր մօտ ծառայողների այնպէս էլ ողորմելի ռոճիկները...

Ահա դրանով է տօնախմբում հայոց կենտրօնական Բարեգործական կովկասեան ընկերութիւնը իր գոյութեան տասն տարվայ տարեդարձը:

Այդ ընկերութիւնը իր վերջին ընդհանուր ժողովում ուրիշ ոչինչ միջոց չը գտաւ իր տասն տարվայ գոյութիւնը յաւերժացնելու համար՝ եթէ ոչ իր քարտուղարի ռոճիկը կէսով չափ պակասեցնելու, նրա 600 ռուբլի ռոճիկը՝ 300 ռուբլի դարձնելու: Եւ շատ գոհ իր արածից, տասն տարի գոյութիւն ունեցող ընկերութեան ընդհանուր ժողովը ցրվեց, այն հաստատ գիտակցութեամբ, որ արժանաւոր կերպով յաւերժացրեց ընկերութեան գոյութեան տասն տարվայ յօբելեանը...

Այլ ևս չենք խօսում այն բանի վրա, որ ուրիշ տեղ ամեն մի ընկերութիւն, ամեն մի հաստատութիւն ոչ թէ միայն չէ պակասեցնում, այլ նոյն իսկ աւելացնում է տասն տարի շարունակ ծառայող պաշտօնեաների ռոճիկները, կամ գոնէ միանուագ մի որ և է վարձատրութիւն է տալիս տասն տարի ծառայած մի քարտուղարին, իսկ մեզանում, որպէս վարձատրութիւն տասն տարվայ ծառայութիւնից յետոյ՝ կիսում են պաշտօնեայի ռոճիկը, այն պաշտօնեայի, որը ծառայել է նոյն հաստատութեանը նրա գոյութեան առաջին տարվանից սկսած և տարել է հաստատութեան գործունէութեան ամբողջ ծանրութիւնը,—բայց գոնէ իր հեղինակութիւնը, իր նշանակութիւնը հասարակութեան աչքում բարձրացնելու համար ընկերութիւնը յաւերժացնէր իր տասն տարվայ գոյութիւնը մի որ և է նոր և օգտաւէտ ձեռնարկութեամբ...

Բաւական չէր ընկերութեան խորհրդի անշնորհ գործունէութիւնը,—այդ անձեռնհասութեանն աւելացաւ և ընկերութեան ընդհանուր ժողովի այդ վարմունքը:

Կրկնում ենք. ընդհանուր ժողովը ուրիշ բան չը գտաւ անելու՝ կիսամեռ ընկերութեան տասն տարվայ գոյութեան տարեդարձը յաւերժացնելու համար՝ եթէ ոչ ընկերութեան խորհրդի միակ գործունեայ, միակ բանւոր պաշտօնեայի, քարտուղարի ռոճիկը կիսելու:

Շնորհ չունեն անդամների թիւն աւելացնելու, իրանց ապարդիւն գործունէութեամբ կորցրել են յարգ ու պատիւ հասարակութեան աչքում, սկզբնական 700 անդամներից հասցրել են ընկերութեան անդամների թիւը 100-ի,—և հիմա կարծում են թէ մեծ բան են արել, որ խնայել են ընկերութեան կասայի համար 300 ռուբլի....

Այդպէս է վարվում նա, որը մեծ կարողութիւն կորցնելուց յետոյ, կարծում է թէ բան կը խնայէ, եթէ այսուհետև իր գրասեղանի վրա փոխանակ երկու մոմերի, միայն մի հատ մոմ կը վառէ....

Հարկաւոր է կենդանացնել այդ ընկերութիւնը, հարկաւոր է նոր ոյժեր մտցնել թէ ընկերութիւն ընդհանուր ժողովի մէջ և թէ նրա խորհրդի մէջ, բայց, ի հարկէ, ոչ թէ այնպիսի ոյժեր, ինչպէս են այն ոյժերը, որոնք ընկերութեան վերջին ընդհանուր ժողովում յանկարծակի մտել են ընկերութեան մէջ միմիայն դրա համար, որ ամեն բան խառնաշփոթեն, այդտեղ էլ իրանց մշտական ինտրիգաները մտցնեն, ամենքին մոլորեցնեն, իրանք չաղ չաղ ռոճիկներ ստանալով յանդուգն կերպով աղաղակեն թէ աշխատող մարդիկ կարիք չունեն ռոճիկի, այլ կարող են և ձրի ծառայել....

Ոչ, հարկաւոր է կենդանացնել այդ կիսամեռ ընկերութեան թէ ընդհանուր ժողովը և թէ նրա խորհուրդը՝ թարմ, գործունեայ, գործը անկեղծ կերպով սիրող ոյժերով, որոնք համ իրանք գործ կը կատարեն, համ էլ կիմանան գնահատել ուրիշի աշխատանքի արժանիքը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆՈՒՄ ՀԻՄՆՎԵԼԻ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՌԻԹՈՎ

—

Երևանեան նահանգը յայտնի է իր հարուստ բնութեամբ և իր բերրի հողով, բայց միւս կողմից յայտնի է և այն, որ սոյն այդ նահանգի աղգաբնակութիւնը չէ կարողանում օգտվել երկրի բնական հարստութիւնից: Դրա պատճառն այն է, որ նրա թէ հողի մշակման և թէ արդիւնաբերած հում նիւթերի պատրաստելու միջոցները միանգամայն նահապետական են: Երևանեան նահանգում մի դեսեատին խաղողի վազով տնկած այգին միջին թուով տալիս է 120—180 պուդ խաղող: Եթէ երկիրը հարուստ է և միաժամանակ անհամեմատ քիչ արդիւնք է ստացվում, դա պարզ ապացոյց է, որ մենք հողը մշակել չը գիտենք:

Եւ ահա Երևանեան նահանգի նախկին նահանգապետը միտք է յղանում տեղական այգեգործութեանը և գինեգործութեանը զարկ տալու համար հիմնել մի գինեգործական դպրոց Երևան քաղաքում:

Այժմ քննենք թէ ոլքան նպատակայարմար կը լինի արդի հանգամանքներում մի գինեգործական դպրոց հիմնելը: Պ. նահանգապետի գրութեան մէջ ասված է, ի միջի այլոց, հետևեալը. «ձեռքի տակ չունենալով հմուտ և փորձառու գինեգործներ և այլն», դա նշանակում է, որ հմուտ գինեգործ չը կայ Երևանում, որը թէ տեսականապէս ուսումնասիրած լինէր գինեգործութիւնը և թէ գործնականապէս մօտ ծանօթ լինէր այդ արհեստին:

Ուրեմն եթէ դպրոց հիմնվի Երևանում, այնտեղ դասախօս ուսուցիչները պիտի հրաւիրվեն օտար, Երևանեան նահանգին ոչ ծանօթ մարդիկ, որոնք կամ բոլորովին տեղեկութիւն չեն ունենայ տեղական գիւղատնտեսական արդիւնաբերութեան մասին և կամ եթէ ունենան էլ՝ շատ քիչ և այն էլ լրագրութեան միջոցով: Նորեկ ուսուցիչները պիտի դպրոցի աշակերտներին սովորեցնեն, որ այս ինչ երկրում, այս ինչ տեսակ խաղողից, այս ինչ ձևով պատրաստելով, այս ինչ տեսակ գինի են ստանում և կամ այս ինչ երկրում, այս ինչ հողի վրա, այս ինչ տեսակ խաղողի վազը այս կերպ են մշակում և այլն: Բայց եթէ աշակերտը հարց տայ իրանց, թէ ապա մեր երկրում ինչպէս պիտի անենք—նրանք պատասխան չեն ստանայ, եթէ ստանան էլ՝ շատ անգամ կարող է սխալ լինել:

Ուրեմն այդ ուսումնարանում կը սովորեն թէ օտար երկրում ինչպէս են անում: Դպրոցի աշակերտները կը լինեն միանգամայն տարրական կրթութիւն ստացած 14—17 տարեկան հասակի

պատանիներ։ Դրանք դպրոցն աւարտելով, լի յոյսերով և միանդամայն իրանց ստացած գիտութեան վրա լի հաւատով, կը ցրվեն իրանց գիւղերը և կը սկսեն անմիջապէս գործադրել իրանց դպրոցում ստացած գիտելիքները։

Առաջին, երկրորդ մինչև անգամ երրորդ տարին անաջող կը լինեն նրանց ձեռնարկութիւնները, քանի որ նրանք ստիպված պիտի լինեն բառացի կերպով գործադրել իրանց իմացածը, առանց նախատեսնելու տեղական կլիմայական և հողային ու խաղողի տեսակների զանազանութիւնը, որոնք անպատճառ կաղդեն ձեռնարկութեան ելքի վրա։ Նրանք չեն կարող նախապէս ուսումնասիրել իրանց երկրի զանազան պայմանները, եթէ նախատեսնեն էլ, դժուար թէ կարողանան իրանց ձեռք բերած գիտութիւնը աջողութեամբ յարմարացնել տեղական պայմաններին, քանի որ նրանց կրթութիւնը շատ սահմանափակ է։

Անաջողութեան պատճառով նրանք կընկնեն հասարակութեան աչքում, նրանց հետ կընկնեն և նրանց առաջարկած միջոցները և ասածները։ Ժողովուրդը կը սառի դէպի ուսումնարանը, կը կորցնի իր դէպի այդ հիմնարկութիւնն ունեցած հաւատը. դպրոցաւարտներն էլ տեսնելով այդ բոլորը՝ կը ճնշվեն և իրանք էլ յետ կը քաշվեն իրանց ձեռնարկութիւններից։ Այնուհետև ժողովուրդը աւելի կոյր հաւատով կը կպչի իր նախնական մշակման և պատրաստելու ձևերին։

Այդպիսի տխուր հետևանքի սկզբնապատճառը պիտի փնտռել նրա մէջ, որ մեր երկրի մարդկանց չեն սովորեցնի մեր երկրի համար յարմարեցրած միջոցները։

Մեր կարծիքով, նախ պէտք է հող պատրաստել ապագայ հիմնվելի ուսումնարանի համար, հակառակ դիպուածում ոչ միայն նրա անժամանակ բացվելը իր նպատակին չի հասնի, այլ և կը խանգարի։ Ամենից առաջ պէտք է ուսումնասիրել մեր երկրի կլիման, հողը, բերքը, խաղողի վազի տեսակները, նրանց մշակման ձևը, զանազան տեսակներից ստացած գինու յատկութիւնները և ապա գինեգործութիւնը և այգեգործութիւնը յարմարեցնել մեր երկրի տեղական պայմաններին, մի խօսքով ստեղծել «տեղական գինեգործութիւն» և «տեղական այգեգործութիւն», հիմնել դպրոց, որի միջոցով և տարածել այդ գիտութիւնները։

Այդ նպատակին հասնելու համար մենք մեր կողմից կառաջարկէինք հետևեալ միջոցը։

Առ ժամանակ պիտի հրաժարվել դպրոց բանալու մտադրութիւնից և բաւականանալ փորձնական կայարանով։

Երևանում պէտք է հիմնել մի կենտրոնական փորձնական կայարան, որի նպատակը պիտի լինի՝ ուսումնասիրել գինեգործութիւնը և այգեգործութիւնը տեղական կլիմայական և հողային պայմաններին յարմարեցնելու հարցը։ Կայարանը ղեկավարելու համար պիտի հրաւիրվեն հմուտ գինեգործներ և այգեգործներ։ Կայարանը պիտի ունենայ արդէն տեղական ձևով մնկած այգի, պիտի ունենայ ազատ հող զանազան փորձերի համար—այդտեղ կը մնկվեն նոր ձևով, նոր տեսակ վազեր, որոնց կարելի է ենթարկել զանազան ձևի մշակման և այլն. կայարանը պիտի ունենայ շիրատուն, գինետուն, որտեղ պիտի բաղմակողմանի փորձեր անվեն տեղական խաղողի զանազան տեսակներից ստացած շիրայի վրա. այդ փորձերը պիտի լինեն թէ տեղական կահկարասիքով և տեղական ձևով և թէ տակառների մէջ ու գիտութեան թելադրած կատարելագործված միջոցներով։ Կայարանը պիտի ունենայ պարբերական դասախօսութիւններ անպատճառ տեղական լեզուներով (հայերէն և թուրքերէն), հակառակ դիպուածում անօգուտ կանցնեն, քանի որ լսող և հետաքրքրվող դասը հայերը և թուրքերն են, այն էլ դրանց ստոր դասակարգը, որին միանդամայն անմատչելի կը լինի ռուսաց լեզուն։ Դասախօսութեան նիւթը պէտք է յարմարեցնել ժամանակի պահանջներին, օր. զարնան սկզբին պիտի դասախօսել վազի մասին, ինչպէս բազմացնել, ինչպէս աւելորդ ճիւղերը կտրել (подрѣзка) և այլն. ամառը՝ հողի մշակման մասին, ջրելու մասին, խաղողի ողկոյցները գետնից բարձրացնելու մասին։ Աշնան սկզբին՝ խաղողաքաղի մասին, խաղողի ջարդելու, շիրայի, ֆերմանտացիայի, շիրատան մասին. աշնան վերջը գինին տեղափոխելու մասին, զտելու մասին, տաքացնելու մասին. ձմեռը՝ հիւանդութիւնների և նրանց առաջն առնելու մասին։

Երևանի կենտրոնական փորձնական կայարանը պիտի ունենայ և ճիւղեր յատկապէս Երևանեան նահանգի այն տեղերում, որտեղ կլիման և հողը առանձնայատուկ պայմաններ են ներկայացնում։ Դոյնսման կազմակերպութիւն պիտի ունենան և այդ ճիւղերը։

Այդ կայարանները պիտի գործեն գոնէ մի 10 տարի, եթէ ոչ աւելի։ Այդ տաս տարվայ ընթացքում կայարանների ղեկավարները կարող են բաղմակողմանի կերպով ուսումնասիրել մեր երկիրը գինեգործութեան և այգեգործութեան տեսակէտից։ Նրանք շարունակ կարող են անաջողութիւնների հանդիպել, բայց նրանք անհամեմատ աւելի շուտով կը գտնեն անաջողութեան պատճառը և աւելի յարմարաւոր միջոցներ կարող են սահմանել աւելի աջող ելքին հասնելու համար։ Այդ կայարանը միայն ընդունակ կը լինի ստեղծելու. 1) տեղական գինեգործութիւն, 2) տեղական այգեգործութիւն։

Երբ կայարանի պատրաստած մշակած գիտելիքները բաւարար կը լինեն, այն ժամանակ անմիջապէս կարելի է դպրոց բանալ։

Գուցէ մեզ ասեն. չէ որ այժմեան հիմնվելի դպրոցի ուսուցիչներն էլ կարող են ուսումնասիրել և ժողովել այն տեղեկութիւնները, որոնք մենք վերը յիշեցինք։ Այո, կուսումնասիրեն, բայց քանը Նրանումն է, որ դա Նրանց համար կը լինի մի երկրորդական պարապմունք, ըստ որում ժամանակ և յարմարութիւններ քիչ կունենան և եթէ ուսումնասիրելու միջոցներ էլ ունենան՝ մինչև նիւթ մշակելը արդէն մի քանի տարիներ կանցնեն և մեր նախատեսած անմխիթար դրութիւնն իր գործը կը կատարի և այն ժամանակ այլ ևս գուցէ ուշ կը լինի ուսուցիչների ուսումնասիրութեան գործադրութիւնը։

Վերջացնելով մեր ասելիքը կրկնում ենք, որ եթէ ցանկութիւն կայ զարկ տալ Երևանեան գինեգործութեանը և այգեգործութեանը, պէտք է նպատակայարմար միջոցներին դիմել, հակառակ դիպուածում նպատակին չենք հասնի և մեր կարծիքով առժամանակ միակ յարմարաւոր միջոցը մեր առաջարկած փորձնական կայարանն է և ոչ թէ գինեգործական դպրոցը։

Վ. Ագուլիս. Մ. Մուսինեանց

ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ ԵՐԿՈՒ ՆՈՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Այս օրերս մենք առիթ ունեցանք այցելել մեր երիտասարդ նկարիչ, Գէորգ Բաշինջաղեանի արհեստանոցը, Թիֆլիսում։ Տաղանդաւոր նկարիչը պատրաստել է երկու շատ մեծ պատկերներ, որոնցից մինը մօտ $2^1/_2$ արշին երկարութիւն ունի և $1^1/_4$ բարձրութիւն, Պետերբուրգի ակադէմիական պատկերահանդէսն ուղարկելու համար։ Բաշինջաղեանի տաղանդը քանի գնում, կատարելագործվում է. մենք զմայլված մնացինք նրա այն պատկերի առջև, որը ներկայացնում է Թիֆլիսի շրջակաները (Օրթաճալայի կողմը) լուսնակ գիշեր ժամանակ։ Ամպերը, այն էլ անձրևաբեր ամպերը, պատել են երկինքը, և յանկարծ նրանց թանձր քողը պատռելով հանդէս է եկել լուսինը, որը սրբիռում է ընութեան վրա իր մեղմ, արծաթափայլ լոյսը, արտափայլվելով օձապտոյտ ճանապարհով հոսող Կուր գետի ջրերում։ Աջ կողմը երևում են մի քանի տնակներ, որոնց վրա մասամբ ընկնում են լուսնի շողքերը, թողնելով տնակների առջևի պատերը մթութեան մէջ։ Ամբողջ պատկերը թէև վերին աստիճանի իրական է, բայց և շնչում է մի տեսակ բանաստեղծական ոգով։ Օդը թափանցիկ է և հեռաւորութիւնն անմահ։ Մենք վստահութեամբ կասենք, որ Բաշինջաղեանի վրձինի տակից դեռ ևս երբէք չէ դուրս եկել այդ տեսակ կատարեալ ձիթանկար։ Միւս, նոյնքան աջողված պատկեր, որը սակայն առաջինի պէս խոր տպաւորութիւն չէ գործում, որովհետև զուրկ է օդից՝ ներկայացնում է մի խիտ անտառ, որի ծառերի բունները տեղ տեղ լուսաւորված են ստուերախիտ կանաչի միջով անցնող արևի ճառագայթներով։ Այդ պատկերը անշուշտ պահանջեց աւելի մեծ և մանրակրկիտ աշխատանք նրկարչի կողմից, բայց առաջինն աւելի վեհ տպաւորութիւն է գործում, քանի որ աւելի ընդարձակ է նրա հորիզոնը, աւելի բազմակողմանի են նրա էֆէկտները։ Լինել ճշմարտասէր ընութեան նկարագրութեան վերաբերմամբ և մի և նոյն ժամանակ լինել բանաստեղծ,—ամեն մի նկարչին չէ աջողվում։

Շնորհաւորում ենք պ. Բաշինջաղեանին իր վրձինի երկու այդ նոր արդիւնաբերութիւնների առիթով և ցանկանում ենք նրան կատարեալ աջողութիւն Պետերբուրգի պատկերահանդէսում։

Լսում ենք որ մեր նկարչի վերոյիշեալ երկու ձիթանկարներն արդէն մի քանի օր է որ ուղարկված են Պետերբուրգ։

Ա.

ԵՐԵՒԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

Որքան էլ Երևանը պակասութիւններ ունենայ, որքան էլ նա անշարժ, քնած, անմաքուր և «պարսկական» լինի բայց Անդրկովկասեան ուրիշ շատ քաղաքների մօտ կարող է պարծենալ մի բանով —իր դումայով։ Երևանն ունի դումա, ունի քաղաքային ինքնավարութիւն,—ուրեմն և ունի միջոց անմիջապէս, իր քաղաքացիների միջոցով հոգալու քաղաքի աղդարնակութեան բարեկեցութեան, քաղաքի առաջադիմութեան մասին։

Միթէ այբուբենական հին ճշմարտութիւններ չենք լինի կրկնած, եթէ ասենք, որ դումայի նման հիմնարկութեամբ մեր հին քաղաքի բնակիչները դեղեցիկ միջոց ունեն՝ վարժվելու ընտրողական գործերում, առաջ մղելու քաղաքի մէջ եղած արժանաւոր գործիչներին, և սովորեցնել իրանց և ուրիշներին՝ սեփական միջոցներով հոգալու իրանց պէտքերը և ցաւերը։ Սակայն որպէս զի քաղաքային դումայի նման հիմնարկութիւնը, իբրև նորութիւն Երևանի «պարսկական» կեանքի մէջ, կարողանայ գրաւել հասարակութեան վստահութիւնը և յարգանք ներշնչել դէպի իրան, հարկաւոր է որ այդ դումայի ղեկավարները լինեն անարատ, բարեխիղճ և յարգելի անձինք։ Այդ ամենակարևոր անհրաժեշտութիւն է մանաւանդ այն պատճառով, որ Երևանի հասարակութիւնը, ինչպէս ամեն մի կիսակիրթ հասարակութիւն, սկզբում ամեն մի նոր հիմնարկութեան, ամեն մի նոր սկզբունքի լաւ կամ վատ լինելը չափում է նրանով, թէ ինչ տեսակ մարդ է այդ հիմնարկութեան կամ սկզբունքի ներկայացուցիչը։ Եթէ օրինակ, Երևանի դումայի մէջ, միմեանց ետևից քաղաքագլուխը և քաղաքային վարչութեան ղեկավարները լինեն անշնորհ, անարժան և արատաւորված մարդիկ, դա առիթ կը տայ անհեռատես հասարակութեանը կարծելու, թէ ոչ թէ այդ մարդկանց անշնորհութեան պատճառով է, որ դուման ոչինչ չէ շինում, այլ թէ նոյն ինքն քաղաքային ինքնավարութիւնը, իբրև մի նոր հիմնարկութիւն, անպատակ ու քաղաքի համար աւելորդ մի բան է։

Եւ եթէ այժմ Երևանի հասարակութիւնը ընդհանրապէս ասելով սառն է վերաբերվում դէպի քաղաքային դուման և առանձին յոյսեր նրա վրա չէ դնում,—դա պէտք է վերագրել այն բանին, որ այդ ինքնավարութեան ղեկավարները, մեծ մասամբ, եղել են և են այնպիսի մարդիկ, որոնք քաղաքային դումայի չէ մքից անդամ ներս չը պէտք է մտնէին։

Իսկ Երևանի հասարակութեան պարտքն է, ընտրութիւններ անելիս լինել անկողմնապահ, հեռատես, և որ ամենագլխաւորն է, անպէտք անձանց անուան հետ չը կապել մի ամբողջ հիմնարկութեան լաւութիւնը կամ վատութիւնը։

***

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Հինգշաբթի, ամսիս 16-ին, Վանքի աւագ-եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ Թիֆլիսի հայոց ամբողջ հոգևորականութեան ներկայութեամբ հանգուցեալ Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլայեվիչի յիշատակին։ Հոգեհանգստին հանդիսադիր էր Համազասպ վարդապետը, թեմական առաջնորդի հիւանդութեան պատճառով։

—

Յունվարի 16-ին Կուր գետում խեղդվածների աղքատ ընտանիքների օգտին հետևեալ անձինք ուղարկել են մեզ հետևեալ գումարները. բժշկապետ Մինաս Մկրտչեանց 15 ռուբլի, բաղուաբնակ Յովհաննէս Կարգանով 10 ռ., Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան 100 ռուբլի, Նկրսիսեան դպրոցի տեսուչ Յովհաննէս Սպենդիարեանց 84 ռ. 83 կոպ. (որոնցից 39 ռ. 20 կ. դպրոցի ուսուցիչներից, իսկ 45 ռ. 63 կ. դպրոցի աշակերտներից), տիկին Ադամեան 1 ռ., ընդամենը 210 ռուբլի 83 կոպ., իսկ նախկին 406 ռուբլու հետ, ունենք այժմ 616 ռուբլի 83 կոպէկ։

—

Ցիշեցնում ենք որ վաղը, կիրակի, 19-ին յունվարի, լինելու է Թիֆլիսի ժողովարանի դահլիճում «Հայուհեաց Բարեգործական ընկերութեան» պարահանդէսը, ալէգրիով։ Պարահանդէսից ստացվելի արդիւնքի 10% կը յատկացվի յունվարի 6-ի աղետի վնասվածների օգտին։

—

Ինչպէս յայտնի է Թիֆլիսի դուման ընտրել է մի մասնաժողով, որը պէտք է տեղեկութիւններ հաւաքէ յունվարի 6-ի աղետից վնասված ընտանիքների մասին և բաժանէ աղքատ ընտանիքներին քաղաքային վարչութեան մէջ հաւաքված դրամները։ Մասնաժողովի անդամներ ընտրվեցան. Ն. Փրիդոնով, իշխ. Վ. Միքելաձէ, Ի. Բուդանեան, Մ. Թամամշեան և Ա. Յովհաննիսեան։ Այդ վերջինը, ինչպէս լսել ենք, հրաժարվել է մասնաժողովի անդամ լինելուց։ Վատ չէր լինի եթէ մասնաժողովը հրաւիրէր իր նիստերին մասնակցելու, գոնէ խորհրդակցական ձայնի իրաւունքով, և այն հաստատութիւնների ներկայացուցիչներին, որտեղ նոյն նպատակով փողեր են հանդանակվում։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Ինչպէս յայտնի է, Երևանի ժողովուրդը բաղկացած է հայերից և թուրքերից. քաղաքային հիւանդանոցում մինչև այժմ ծառայում է մի ռուս բժիշկ, որը չը գիտէ խօսել ոչ հայերէն, ոչ էլ թուրքերէն լեզուով, ուրեմն նրան շատ դժուար է հասկանալ հիւանդների ասածները և հասկացնել նրանց իր ուզածը։ Լաւ կը լինէր որ հիւանդանոցում ընդունվեր հայերէն և թուրքերէն իմացող բժիշկ։ Այս օրերս եկել է մեր քաղաքը բժիշկ Սարգսեան, որը տեղացի լինելով, գիտէ երկու տեղական լեզուներն էլ։»

—

Յունուար Կուր գետում խեղդվածների ընտանիքների մեր անցեալ համարում տպված նուիրատուութիւնների ցուցակի մէջ մի սխալ է մտել. ոչ թէ Յովհաննէս Թումանեանցն է նուիրել 10 ռուբլի, այլ Յովհաննէս Թումանց։

—

Երգուեալ հաւատարմատարի օգնական ԵՐԵՒԱՆՈՒՄ պ. Գաբրիել Մնացականեան, խնդրում է մեզ տպագրել հետևեալը. «Աչքի առջև ունենալով այն բազմաթիւ դէպքերը, երբ թէ մասնաւոր և թէ իրար մէջ ընկերութիւն կազմող բամբակագնողները մեղադրվում են թէ հարստահարում են գիւղացի բամբակ-ծախողներին, սրանով յայտնում եմ որ պատրաստ եմ բոլոր այդ տեսակ գիւղացիների դատերը առանց խորութեան կրօնի և ազգութեան, պաշտպանել դատարաններում բամբակ գնողների դէմ, առանց որ և վարձ պահանջելու, ներկայանալով, նմանապէս, երբ հարկը պահանջէ, ինչպէս քաղաքացիական պահանջատէր քրէական գործերում, որոնք կը վարվեն բամբակ առնողների դէմ։ Մի և նոյն ժամանակ խնդրում եմ բոլոր այն խմբագրութիւններին, որոնք կը ցանկանան ինձ օգնել այդ իմ ձեռնարկած գործում, իմ այս յայտարարութիւնը նոյնութեամբ կամ թարգմանաբար արտատպեն իրանց թերթերում։»

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են. «Մինչև տօնի նախընթաց օրերին Քութայիսի հայոց երկու ուսումնարաններում որչափ հնար էր շքեղ կերպով կատարվեց աշակերտական գրական-երաժշտական երեկոյթը։ Կարդացվեցան բանաստեղծութիւններ՝ հայերէն և ռուսերէն լեզուներով և մէջ ընդ մէջ աշակերտական երգեցիկ խումբը երգում էր։ Վերջը ներկայացվեցան երեք կենդանի պատկերներ Ս. Սանդուխտի նահատակութիւնից։ Ներկայ եղած հասարակութիւնը շատ գոհ մնաց երեկոյթից և խնդրեց որ տարին մի քանի անդամ կրկնվեն այդպիսի խնջոյքներ։ Ինքն հասարակութիւնը ցանկացաւ նիւթապէս օգուտ տալ ուսումնարանին և բաւականաչափ դնեց աշակերտուհիների ձեռագործական նիւթերը։ Ցանկալի է որ մեր վրացախօս հայ հասարակութեան մէջ զարթնէ ձգտում դէպի մայրենի լեզուի ուսումը։»

—

Շնորհակալութեամբ ստացանք «Աղբիւրի» և «Ցարազի» ներկայ 1892 թուի երեք պրէմիաները. 1) Գիգոր Լուսաւորիչ մկրտում է Տրդատ թագաւորին, 2) Պետրոս Ադամեանի պատկերը և 3) Խրիմեան հայրիկի պատկերը։ Երկու վերջին պատկերները նկարել է մի աղքատ և անյայտ երիտասարդ Սողոմոնեան։ Շատ ափսոս որ ճշմարիտ արտակարգ ձիրք ունեցող այդ երիտասարդը, նիւթական միջոցների պակասութեան պատճառով, չէ կարող առաջ գնալ և կատարելագործել իր ընդունակութիւնը։ Մի՞թէ, ճշմարիտ, մեր հասարակութեան մէջ յայտնվող ամեն տեսակ

տաղանդներ պէտք է անհետք կորչեն և ապարդիւն կերպով մաշվեն:

—

Կուր գետում յունվարի 6-ին խեղդվածների աղքատ ընտանիքների օգտին յունվարի 26-ին, կիրակի օր, կը կայանայ կոնցերտ ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ: Կոնցերտից յետոյ կը լինեն պարեր: Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Դվորցովայա փողոցի վրա, Թիֆլիսի կալուածական բանկի շինութեան մէջ գտնվող Միրիմանեանի երաժշտական մագազինում, իսկ կոնցերտի երեկոյեան՝ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ դռնապանի մօտ:

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ մտադրութիւն կայ հիմնելու մի նոր ընկերութիւն, որի նպատակը պիտի լինի պարապմունք գտնել անբարոյական կանանց համար և այդպիսով նրանց ազատել անկումից:

—

Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական ընկերութիւնը յունվարի 14-ի նիստում որոշեց՝ կազմակերպել մի շարք հանրամատչելի գիտական դասախօսութիւններ: Դասախօսութիւնները պէտք է լինեն ընկերութեան շինութեան մէջ, և մուտքից գոյացած արդիւնքը պէտք է յատկացվի Ռուսաստանի սովեալներին:

—

ԷԶՄԻԱԾՆԻ սինոդի կողմից ուղարկված քննիչ յանձնաժողովը, որը պէտք է քննութեան ենթարկէ յունվարի 6-ի աղետի գործը, արդէն հասել է Թիֆլիս:

—

ՕԶՈՒՐԳԷԹԻՑ հեռագրում են «Իվերիա» լրագրին, յունվարի 15-ից հետևեալը. «Այսօր, կէսօրին, 1 ժամին, Ուշխուբ գիւղում, ոստիկանները սպանեցին յայտնի աւազակներ՝ Դաթունաշվիլիին և Մուխազլային, որոնք իրանց հերթում սպանեցին չորս հոգի և վիրաւորեցին երկու հոգի ոստիկաններից:»

—

Ամսիս 16-ին Ս. Էջմիածնից ԹԻՖԼԻՍ ժամանեց սինոդի անդամ սրբազան Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան, քննելու յունվարի 6-ին պատահած աղետի պատճառները՝ հոգևոր վարչութեան կողմից: Սրբազանին ուղեկցում են՝ անդամներ՝ Եփրեմ վարդապետ Սուքիասեանց, որպէս քարտուղար և պ. Յովհ. Սաղաթէլեան, որպէս իրաւաբան: Շնորհաւորում ենք սրբազան քննիչի գալը և Թիֆլիսի հասարակութեան հետ միասին յուսով ենք որ սինոդի արած կարգադրութեան շնորհով երեան կը հանվեն գործի իսկական յանցաւորները: Հասարակաց կարծիքը անհամբեր սպասում է քննութեան հետևանքին:

—

Երկուշաբթի, յունվարի 20-ին, Արքունական թատրոնում, հայոց դերասանական խումբը ներկայացնելու է «Զաւակ» դրաման, ի նպաստ պ.պ. Արաքսեանի և Աղայեանի: Այդ դրաման, որը բաւական աջողութիւն է ունեցել մայրաքաղաքի բեմերի վրա, առաջին անգամն է խաղացվում հայոց բեմի վրա: Դա արդէն մի հետաքրքրական առիթ է, որ պէտք է գրաւէ դէպի թատրոն հասարակութիւնը: Հասարակութիւնը գրաւելու միւս առիթն այն է, որ այդ ներկայացումը վերոյիշեալ երկու դերասանների բէնէֆիսն է: Պ. Արաքսեան նոր դերասան է. մի յայտնի տեսակի, մանաւանդ տեղական կեանքից վերցրած դերերում, նա այնպիսի շնորհ ցոյց տուեց կարճ միջոցում, որ արժանի է հասարակութեան խրախուսանքին և համակրութեան: Իսկ պ. Աղայեան հին դերասան է. նրան հասարակութիւնը ճանաչում է: Ցարդելով այդ պարոնի տոկունութիւնը և այնքան տարի հայոց բեմի հետ անխզելի կերպով կապված մնալը, մենք նրա բէնէֆիսի, այսպէս ասած, դերասանական տօնախմբութեան օրը՝ հետևեալ անկեղծ խորհուրդը կը տանք նրան. —ձեռք վերցրէք ուրիշին հետևելու սովորութիւնից. խաղացէք ձեր բնական ձայնով, բնական ձևերով, մոռացէք Աղամեանին,—և հաւատացած եղէք, որ անհամեմատ լաւ կը խաղաք ու համակրութիւն կը ստանաք: Ձը պէտք է մոռանալ, որ աշխատասիրութեամբ և տոկունութեամբ շատ բան կարելի է անել:

—

Յունվարի 16-ին կայացաւ ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ Սլավիանսկու երգեցիկ խմբի կոնցերտը, որի արդիւնքի կէսը պէտք է յատկացվի յունվարի 6-ի աղետի ժամանակ Զեասլաւցների ընտանիքների օգտին: Խումբը շատ լաւ երգեց, բայց մանաւանդ հիացում պատճառեց օր. Սլավիանսկայա (Սլավիանսկու աղջիկը), որը հիանալի կերպով երգեց հայերէն լեզուով «Գարուն» յայտնի երգը: Հանդիսականների հիացմանը չափ չը կար: Օրիորդը շատ լաւ էր արտասանում հայերէն բառերը և նրա ձայնն էլ շատ դուրեկան է: Սակայն ժողովուրդ շատ չը կար դահլիճում. այդ երևոյթը բացատրվում է նրանով, որ կոնցերտի մասին յայտարարութիւնները շատ ուշ տպվեցան տեղական լրագիրներում, իսկ թէ օրիորդը կերգէ՝ ոչինչ ասված չէր յայտարարութիւնների մէջ: Եթէ ոչ, մենք հաւատացած ենք, որ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ դահլիճը կատարելապէս լի կը լինէր:

—

Հարկաւոր ենք համարում նկատել «Новое Обозрѣніе» լրագրի խմբագրութեան, որ յունվարի 6-ի աղետի զոհերի ցուցակի մէջ, որը տպագրել է յիշեալ լրագիրը, սխալներ են մտել: Մի երկու սպանվածների անուններ, որոնք ուղղակի խորտակման տեղից են տարվել, չեն մտցրած ցուցակի մէջ, ցուցակի՝ մէջ չը կայ և 19 տարեկան պատանի Թէոդորոս Խառատեանի անունը, որը դանդեղորցի է և Թիֆլիսում կօշկակարութեամբ էր պարապում:

—

Վիկտոր Հիւգոյի «Անջելո» պիէսայի ներկայացումը, յունվարի 16-ին, հասարակութիւն չը գրաւեց: Թատրոնը դատարկ էր: Այն երեկոյին իրանց խաղով գոհացում պատճառեցին տիկիններ Սիրանոյշ և Զարէլ և պ. Յարութիւնեան, իր փոքրիկ, բայց պատասխանատու դերում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼՔԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Բրիւսէլի «Independance Belge» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հետևեալ կերպով է նկարագրում «իսկական դիպլոմատիական դրութիւնը» Արևելքում:

«Ի մեծ դժբաղդութիւն Ֆրանսիայի, ներկայումս շատ լաւ յայտնի է, որ Աւստրօ-Ունգարիան և Անգլիան քաղաքականութեան գլխաւոր ղեկավարներն են Արևելքում, և այդ երկու պետութիւնների գործունէութեան շնորհով անհետանքը են մնում Ֆրանսիայի և Ռուսաստանի թէ առանձին առանձին և թէ միասին գործ դրած ջանքերը: Օգնական ունենալով գերմանական զօրեղ կայսրութիւնը, իր ճանկերում ունենալով Բօսնիան և Հերցեգովինան, որոնք, Միտրովիցայի շնորհով, միշտ սպառնալի են Մակեդոնիայի՝ Բ. Դրան պատկանող այդ միակ թանգագին նահանգի համար, հաբսբուրգեան արծիւը տարածում է իր թևերը Բալկանեան թերակղզու հիւսիսային մասի վրա, ժամանակ առ ժամանակ իր աչքերն ուղղելով դէպի Միջերկրական ծովի կապոյտ ջրերը: Հարաւում Անգլիան տիրեց Եգիպտոսը, մի երկիր, որի հետ կապված է մահմեդական փառահեղութեան և մեծութեան հարցը: Իտալիայի հետ կայացրած համաձայնութեան շնորհով, Անգլիան այժմ, քան երբ և իցէ, տիրապետում է Միջերկրական ծովի վրա:

Հէնց որ Թիւրքիան կամենում է դիմադրութիւն ցոյց տալ որ և է հարցի առիթով, այդ երկու պետութիւնները, յենվելով իրանց դաշնակիցների վրա, զգալ են տալիս նրան իրանց ճանկերը: Այդպիսի պայմաններում ինչ է մնում անել Թիւրքաց դիպլոմատներին: Կրօնչտատեան անցքերը, անկասկած, մի յայտնի տպաւորութիւն գործեցին: Բայց դժբաղդաբար, այդ բարեկամական զգացմունքները չեն կարող գործնական նշանակութիւն ունենալ: Արևելքում Ռուսաստանը և Ֆրանսիան միացած չեն մի և նոյն զգացմունքներով: Նրանք չունեն այնպիսի միանման շահեր, որ դրդեն նրանց ձեռք ձեռքի տուած և մի ուղղութեամբ գործել, որպէս ներկայումս գործում են Աւստրիան և Անգլիան:

Բացի դրանից, Ֆրանսիան հողի ոչ մի կտոր և կալուածներ չունի Արևելքում, որոնց պատրուակով կարողանար նա ցոյց տալ Թիւրքիային իր զօրութիւնը: Ռուսաստանը թէպէտև ընդհարվում է Թիւրքիայի հետ Ասիայում, բայց այդ կէտը շատ էլ վտանգաւոր չէ: Բաւական է Աւստրիայի մի շարժում՝ Բալկանեան թերակղզու բոլոր աղգերին տակն ու վրա անելու համար: Սերբիացիները, չերնոգորցիները, ալբանցիները, բուլգարները, յոյները և մինչև անգամ վալախները կապստամբվեն: Գործերը եթէ վերոյիշեալի նման ընթացք ստանան, Թիւրքիային կորուստ է սպառնում: Աւստրիան կարող է սպառնալ, որ Թիւրքաց տիրապետութիւնը կը ջնջի Եւրօպայումայն ինչ Ռուսաստանը չէ կարող նոյնպիսի հեռանքին հասնել Ասիայում: Պէտք է ուշադրութեան առնել նոյնպէս այն հանգամանքը, որ այդ պետութիւնը երբէք չէր խրախուսում Թիւրքաց հայերի ապստամբական ձգտումները, որ ղրկում է նրան Բ. Դրան կառավարութեան վրա ճնշում գործելու նշանաւոր միջոցից: Այս է Արևելքի իսկական դրութիւնը: Սուլթանի հպատակ բոլոր քրիստոնեաները, մանաւանդ յոյները, ողբում են գործերի այդպիսի ընթացքը: Նրանք գիտեն, որ Ֆրանսիան, մնծահոգի դաղափարներով ոգևորված, ոչ մի թշնամութիւն չէ զգում դէպի օտար աղգերը և դիտաւորութիւն չունի այդ աղգերի հիւթերը քամել Արևելքում: Անգլիացիները և գերմանացիները, ընդհակառակն, խորին կերպով արհամարհում են տեղական տարրը և աշխատում են, կարողացածին չափ, անտես առնել նրան:

Ձէ կարելի նոյնպէս չը նկատել, որ ռուսները և ֆրանսիացիները շատ էլ յաջողդաբար չեն պաշտպանում այստեղ իրանց շահերը: Նրանք յաճախ երեսի վրա են թողնում մի հարց, որը նորերս նրանք մեծ եռանդով էին պաշտպանում, և իրանց այդպիսի հակասական ընթացքով անբարեյաջող տպաւորութիւն են գործում օսմանեան կառավարչական շրջանների վրա, այն ինչ Աւստրիան, Գերմանիան և Անգլիան անդադար դիմում են մի որոշ նպատակին, և այդպիսով մեծ ազդեցութիւն են գործում Թիւրքաց քաղաքականութեան վրա:

Վերոյիշեալ խորհրդածութիւնները մենք քաղել ենք շատ հեղինակաւոր աղբիւրներից: Ցանկալի է, որ ռուս և ֆրանսիական շրջանները ուշադրութեան առնէին վերոյիշեալ խորհրդածութիւնները, որով անկասկած, կամրացնէին իրանց աղդեցութիւնը Արևելքում և յամենայն դէպս աղատած կը լինէին մի քանի սխալներից»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Кавказъ» լրագրի Մէշէդի թղթակիցը գրում է յունվարի 4-ից հետևեալը. «Որքան էլ Շահի կառավարութիւնն աշխատում էր ծխախոտի մենաւաճառը մտցնել Պարսկաստանում, բայց ծխախոտավաճառները, հոգևորականութեան հետ միասին, աջողեցրին, վերջապէս, վերացնել տալ Շահի այդ հրամանը, և այդ պատճառով պահանջեցին արձակել ընկերութեան բոլոր ծառայողներին: Այս օրերս ծխախոտի մենաւաճառութեան գլխաւոր վարչութիւնը թէհրանում հրամայեց արձակել ընկերութեան բոլոր ծառայողներին առանց բացառութեան: Այդ պատճառով բազմաթիւ եւրօպացիներ, տեղական խաներ և ստորին դասակարգի մարդիկ անգործ մնացին, իսկ ընտանիք ունեցող եւրօպացիներն անելանելի դրութեան մէջ են մնացել: Ասում են, որ հիւպատոսները պահանջում են ընկերութիւնից պաշտօնազուրկ եւրօպացիներին տալ վեց ամսվայ ռոճիկ իւրաքանչիւրին և մի յայտնի գումար հայրենիք վերադառնալու համար: Ընկերութիւնը դեռ ևս հրաժարվում է կատարել հիւպատոսների պահանջը, պատճառաբերելով թէ ինքն այդպիսի պայման չէ կապել ծառայողների հետ:

—Թէպէտ և պ. Կարնօի նախագահական լիազօրութիւնները դեռ ևս չեն աւարտվել, ֆրանսիական մամուլի մի մասն արդէն խօսում է նրա յաջորդի մասին: Պ. Կարնօին երկրորդ անգամ նախագահ ընտրելու կողմնակիցներ շատ կան և մեծ հաւանականութիւն կայ, որ երկրորդ եօթնամեակի համար Կարնօ ֆրանսիական հանրապետութեան նախագահ կընտրվի: Սակայն հաւատացնում են, որ ինքն պ. Կարնօ չէ ցանկանում այդ: Ցանկանալով, որ Ֆրանսիան ընտելանալ կարողանայ դոյութիւն ունեցող հանրապետական հիմնարկութիւններին և որպէս զի իւրաքանչիւր եօթնամեակը լրանալուց յետոյ Ֆրանսիացին տեսնի կառավարութեան նոր գլուխ, նա վճռել է, որոշեալ ժամանակամիջոցը լրանալուց յետոյ, զիջանել նախագահական բաղկաթոռը մի ուրիշ անձին, որին արժան կը համարի այդ պաշտօնի համար ազգային ժողովը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիական պրինցի մահվան առիթով, «Globe» լրագիրը յիշեցրեց, որ Կլարէնսի դքսի տիտղոսը կրող բոլոր հինգ պրինցները մեռան վաղահաս և անզաւակ: Կլարէնսի դուքսերից երկուսը բռնի մահով մեռան. դրանցից մէկը, Եդուարդ III-ի որդին սպանվեց պատերազմում, միւսը, Եդուարդ IV-ի եղբայրը, խեղդվեց մալվազիայի (գինու) տակառում: Վիկտորիա թագուհու 1884 թվին մեռած որդին, դուքս Ալբանի նոյնպէս կրում էր Կլարէնսի դքսի տիտղոսը: Թէ «Globe» և թէ Լօնդոնի մի քանի այլ լրագիրներն առաջարկում են բոլորովին ոչնչացնել այդ տիտղոսը, որովհետև դա, բացի դժբաղդութիւնից, ուրիշ բան չէ բերում:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի: Այսօր առաւօտեան Շվէդիայի թագաժառանգն այցելեց Պետրոպավլովսկի տաճարը, որտեղ պսակ դրեց Ալեքսանդր II-ի գերեզմանի վրա, ներկայ եղաւ իսակօվեան տաճարում Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաևվիչի հոգեհանդստին, այցելութեան գնաց ներքին գործերի մինիստրին և դեսպաններին. պիտի ճաշի Մեծ Իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչի մօտ:

ՊԱՐԻԶ, 15 յունվարի: Օպերային թատրոնում, բարեգործական Մարէնգէյմի հովանաւորութեան ներքոյ, լինելու է մի մեծ ներկայացում, որից գոյացած արդիւնքի կէսը պիտի յատկացվի ռուս սովեալներին:

ԲԵՐԼԻՆ, 15 յունվարի: Մեծ Իշխան Ալեքսանդր Ալեքսանդրովիչ առաւօտը, թագաւորական տան անդամների հետ գնաց Վիլհելմ կայսրի մօտ և շնորհաւորեց նրա ծննդեան տօնը: Երեկոյեան ճանապարհ պէտք է ընկնեն Պետերբուրգ՝ Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաևվիչի թաղման ներկայ լինելու համար գեներալ Վէրդէր և Գլիդենադիւտանտ Զէկէնդորֆ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի: Յունվարի 11-ից մինչև 13-ը առանձին մասնաժողովը ստացել է մօտաւորապէս 39,500 բուբլի, ի միջի այլոց 30,000 բուբլին նուիրել է Մեծ Իշխան Գեորգի Ալեքսանդրովիչ:—Արտասահմանից հեռագիրներ են ստացվել, որ Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաևվիչի մահվան պատճառով սուգ է նշանակված բոլոր օտար արքունիքներում:

ՎԱՐՇԱՎԱ, 15 յունվարի: Լօձում, Բալուտ արուարձանում, գաղտնի մանկաբարձուհի Բեղնարկովայի մօտ գտնված են երեխաների դիակներ: Գործը նման է Սկուբլինսկայի գործին:

ԲԵՐԼԻՆ, 15 յունվարի: Ռէյխստագը վերջնականապէս ընդունեց Շվեյցարիայի հետ կապվող առևտրական դաշնագիրը: Կառավարութիւնը ենթադրում է մաքսային արտօնութիւններ տալ և դաշնագիր չը կապած պետութիւններին, եթէ նրանք էլ իրանց կողմից արտօնութիւններ կը տան Գերմանիային:

ԲԵՐՆ, 15 յունվարի: Ազգային ժողովն ընդունեց առևտրական դաշնագրերը, որոնք կապվում են Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի հետ:

ԱԹԷՆՔ, 15 յունվարի: Թագուհին յետաձգեց Ռուսաստան գալը, քանի որ անհնարին է Ռուսաստան գալ յունվարի 19-ին, այսինքն այն օրը, երբ որոշված է կատարել Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաևվիչի թաղումը:

ԹԷՀՐԱՆ, 15 յունվարի: Այլ ևս չէ արգելվում ծխախոտ ծխելը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յունվարի: Այսօր շվեդական թագաժառանգը նախաճաշեց Անիչկեան պալատում՝ բարեկամական շրջանում, և ճաշեց Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևվիչի մօտ: Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաևվիչի յուղարկաւորութեանը և թաղմանը թագաժառանգը ներկայ կը լինի իբրև Շվէդիայի թագաւորի ներկայացուցիչ:

ԽԱՐԿՕՎ, 16 յունվարի: Սումայի նահանգական դատարանը չը հաստատեց Խարիտօնենկօի կտակը, ձևականութեան կարևոր պայմանները խախտված լինելու պատճառով: Հանգուցեալի 40 միլիոն կարողութիւնը անմիջապէս անցնում է նրա որդու ձեռքը, որին կտակով միայն մի մասն էր յատկացրած:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի: Երէկ Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաևվիչի մարմինը դրվեց դագաղի մէջ և տեղափոխվեց Պավլովեան պալատի Սպիտակ դահլիճը:—Երէկ, գերմանական կայսրի ծննդեան օրը, Անիչկեան պալատում, Բարձրագոյն ճաշին հրաւիրվեցան պրուսական դեսպան Շվէյնից և զինուորական լիազօր Վիլհիմ: Գերմանական դեսպանի մօտ ընդունելութիւն կարարեցին մինիստրները, դիպլոմատիական ան-

ձինք, կառավարչական և բարձր հասարակութեան ներկայացուցիչներ։—Լրագիրները հաղորդում են, որ վճռված է 20 տեղ շինել էլէվատորներ, որի համար կը յատկացվի 2,000,000 ռուբլի։

ՏԱՆԺԵՐ, 16 յունվարի։ Ապատամբված ցեղերը խաղաղվել են։

ՎԻԵՆՆԱ, 16 յունվարի։ Ունգարիայում ընտրողական շարժումները այնպիսի յուզիչ կերպարանք են ստանում, որ շատ տեղերում հարկ եղաւ զօրք կանգնեցնել։

ՎԵՆԵՑԻԱ, 16 յունվարի։ Միջազգային սանիտարական կոնֆերէնցիան աւարտեց իր գործունքները։

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՎՈՒՄ կամ **ԿԱՊԱԼՈՎ** է տրվում ազնական Յովսէփ Յովհաննիսեան Քալանթարեանի մի բնակեցրած անշարժ **ԿԱԼՈՒԱԾՔ**, որը գտնվում է Լօռու ոսաիկանական մասի ԱՐԴՎԻ գիւղում։ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ Սուզանաձեանի մուզիկային խանութում, Երևանեան հրապարակի վրա։

1—1

Բացված է **ԲԱԶՄԱՎԷՊ** ամսագրի բաժանորդագրութիւնը 1892 թի համար (յիսներորդ տարի)։ Բաժանորդագրութիւնն է տարեկան 10 ֆրանկ (4 ռուբլի) կանխավճար։ Բաժանորդ գրվել ցանկացողները կարող են ուղղակի դիմել հետևեալ հասցէով.

Rédaction de la Revue «Bazmavep» Wenise (Italie) St. Lazare.

կամ Թիֆլիս՝ պ. Յովակիմ Զաթալպաշեանին։ Խմբագրութիւն „Բազմավէպի“։

2—3

ԿԻՐԱԿԻ, յունվարի 19-ին, ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ **ՊԱՐԱՀԱՆԴԷՍ** կը արվի ալլեգրիով՝ „ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ“ ընկերութեան օգտին։ Զուտ արդիւնքից 10% կը յատկացվի յունվարի 6-ի աղետին զոհ գնացածների ընտանիքների օգտին։

Տոմակների գինն է՝ տղամարդկանց համար 2 ռուբլի, կանանց համար 1 ռուբլի։ Կիրակը 9 ժամին երեկոյեան։

3—3

ԲԺԻՇԿ ԼՕՐԻՍ-ՄԷԼԻՔԵԱՆ

կանանց և երեխաների հիւանդութիւնների.

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ

Առաւօտեան 11—12 ժամը և կէսօրից յետոյ 3—4 ժամը։ Հասցէն.—Վելիամինովսկայա փողոց, № 19.

2—10 (ե. շ.)

ԷԺԱՆ ԳՆՈՎ ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ ՄԻ ՄԵԾ **ՆԵՐՔՆԱՏՈՒՆ** (подвалъ), որը կարող է պէտք գալ արհեստանոցի կամ մի այլ այդ տեսակ ձեռնարկութեան։

Հասցէն. Նաբերէժնայա փողոց, № 42։

3—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Հ. Յ. ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 14—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ { առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.

Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։

10—150

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար։

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10,000 ռուբ. համար. 1%-ից մինչև 12%. Վաճառվում է եղբարց Յովհաննէսների բանկային գրասենեակում և հեղինակի մոտ. Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝ С. П. Мануэльянцу.

Գինն է 1 ռուբլի։ Փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի։

60—150

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ԷՎԷԼԻՆԱ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ վէպ (Հոդերանական էտիւդ).

Գինը 50 կոպէկ (պոստի ծախսով)

Ծախվում է. „Մշակի“ խմբագրատանը, կենտրոնական և Խիդէկելի գրավաճառանոցներում և Միքայէլեան կամուրջի վրա գտնվող Յովհաննէսովի գրավաճառանոցում.

15—20

ПОСТУПИЛЪ ВЪ ПРОДАЖУ

„АРМЯНСКІЙ КАЛЕНДАРЬ“ на 1892 г.

(на русскомъ языкѣ) съ предсказаніями.

2—2

ՊԱՆՍԻՕՆ ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ԵՒ ՐԷԱԼԱԿԱՆ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՎ

Ընդունում և պատրաստում է աշակերտներ գիմնազիայի, ռէալական ուսումնարանի, Լազարեան ճեմարանի մինչև հինգերորդ դասատուն. նոյնպէս զէմիէմէրնի, տեխնիկական և այլ միջնակարգ ուսումնարանների համար։

Պանսիօնում աւանդվում են՝ կրօն, հայոց եկեղեցական պատմութիւն, մեկնութիւն պատարագի հայոց, հայոց լեզու (հայերի համար), ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, լատիներէն, յունարէն, վրացերէն, թուրքերէն լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, ընդհանուր պատմութիւն, ռուսաց պատմութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, Ռուսաստանի աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, նկարչութիւն, գրութիւն, խմբական երգեցողութիւն, երաժշտութիւն, պար, մարմնամարզութիւն։

Աշակերտներ ընդունվում են թօշակաւորներ, կիսաթօշակաւորներ և երթևեկներ։

Պանսիօնում դասախօսում են գիմնազիական և ռէալական ուսումնարանի ուսուցիչներ։

Հասցէն. Тифлисъ, Сололаки, Вельяминовская улица, домъ № 11.

4—20 (Շ)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 25 դեկտեմբերից (6 յունվարից) սկսած և փոխադարձ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, և կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի,	25 դեկտ. (6 յունվարի)	— ՄԻՆԴՐԷԼԻԱ	—	ԺԻԲՈՒԷՆ
—	8/20 յունվարի	— —	—	—
—	22 յունվարի (3 փետրվ.)	— —	—	—
—	5/17 փետրվարի	— —	—	—

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ։

Տոմակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են։

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գարանիօնին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, Նախկին գներալ Տէր-Աստատուրովի տանը, ԲԱԳԻՈՒՄ, Սամուէլ Դիլդարովին, կօլիւբիակինսկայա հրապարակ, և ՆՕՎՈՐՕՍԻՑՍԿՈՒՄ պ. Լուի Ռընօին։

10—10 (ե. շ.)

«ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՍԱՐՊԻՆԿԱ ԱՐԴԻՒՆԳԻ» ՍԱՐԱՏՕՎՈՒՄ

ՍԷԶՕՆ 1892 ԹԻՒ —**ՍԱՐՊԻՆԿԱ**— ՍԷԶՕՆ 1892 ԹԻՒ

Ձեռքի հիւսուածք, սեփական պատրաստութեան Պարիզի վերջին մոդային նմուշներին համեմատ

ՆՈՐ — **„ՍԱՐՊԻՆԿԱ-ՐԷԼԻԵՖ“** — ՀԻՒՍՈՒԱԾՔ

Վաճառվում է ամբողջ կտորներով և արշիններով, և ուղարկվում է Ռուսաց կայսրութեան բոլոր քաղաքները։ Նմուշներ շքեղ „Ալբոմում“ ուղարկվում են 42 կոպէկով, պոստային մարկաներով։ Գրագրութիւն ռուսաց լեզուով։

ՀԱՍՑԷՆ. Саратовъ—Товариществу Сарпинокъ.

10—10 (ե. շ.)

ԿԻՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. Ր. ՀԷԶՈՒՐԵԱՆ

Ընդունում է հիւանդներին ամեն օր, 9 ժամից առաւօտեան մինչև 5 ժամ կէսօրից յետոյ, Գօլովինսկի պրոսպէկտ, տուն Անանովի, № 22.

12—15

կենտրոնական գրավաճառանոցում ծախվում են

ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

Թիւրքահայերի նորագոյն կեանքից գրուածները

„Ալմաստ“ վէպ	2 ռուբլի
„Խև-Կարապետ“ վէպ	1 „
„Շուշան“ ողբերգութիւն (օպէրայի համար) երաժշտութիւն Կարամուրզայի	1 „

(շ) 2—10

Մեծ շերամապահական հաստատութիւններ ՄՕԼՏԻՖԱՕ ասված տեղում, ԿՕՐՍԻԿԱ կղզում Ֆրանսիայում)

ԱԼՕԻԶԻ ԵՒ ԸՆԿ.

խնդրահաբար խնդրում է շերամի սերմի յարգելի առնողներին դիմել ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ, կամ Թիֆլիսի շերամապահական կայարանը։

Մեծ քանակութեամբ առնողները թող բարեհաճեն դիմել Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան անդամ պ. Վ. Ա. ՍՈՒԼԽԱՆՕՎԻՆ, Թիֆլիսում, Կուկիա, Նիկօլաևսկայա փողոց, տուն № 39.

Պ. Ալօիզիի սերմերը ծախվում են 1, 3, 5 և 10 զօլոտնիկ կշռող արկղներում, հաշուելով իւրաքանչիւր զօլոտնիկը 60 կոպէկով։ Սերմի լաւութեան երաշխաւորութիւն կարող է լինել այն, որ ինքն պ. Ալօիզի վարձատրված է պատուաւոր դիպլոմով և ցելիւլէր սերմի պաշտօնական հայթայթող է Թուրքեստան երկրում։

6—17 (շ.)

Ց. ԱԼՕԻԶԻ

ԱՑՍՕՐ ՆԻԿԻՏԻՆ ԵՂԲԱՑՐՆԵՐԻ ՑԻՐԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՑԻՐԿ ԶՐԻ ՏԱԿ

ԱՑՍՕՐ ՆԻԿԻՏԻՆ ԵՂԲԱՑՐՆԵՐԻ ՑԻՐԿՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Января 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.